

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԷՔ ԱՐՄԷՆ

55ԴԴ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 27

26 ՄԱՅԻՍ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցականությունը

Նախնական Մարդիկ

ԼՈՒԿԵՏԻՈՍ.Ի

Բաց Նամակ՝ «Տովնո»ին

Լաիմ Հիւժում

Խմաստսիրական եւ Հոգեբանական Հարցեր

Գրիգոր Պատուելի Փետխմալնեան

[Ուսումնասիրություն]

Նոր Գիրքեր

Ժ. — Ք. Հիւզման

Արձագանգ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ՊԵՐՃՈՒՅԻ ԵԱԶԸՃԵԱՆ

ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ

Ե. Ա.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱԵԱՆ

1907

UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

THE STATE OF NEW YORK

IN SENATE

JANUARY

1897

REPORT

OF THE
COMMISSIONERS OF THE
LAND OFFICE
IN RESPONSE TO A
RESOLUTION PASSED BY THE SENATE
JANUARY 18, 1896
RELATIVE TO THE
LANDS BELONGING TO THE STATE

ALBANY

1897

1897

THE HISTORY OF THE
CITY OF LONDON
FROM THE FOUNDATION
TO THE PRESENT
BY JOHN STOW
1618

THE HISTORY OF THE
CITY OF LONDON
FROM THE FOUNDATION
TO THE PRESENT
BY JOHN STOW
1618

THE HISTORY OF THE
CITY OF LONDON
FROM THE FOUNDATION
TO THE PRESENT
BY JOHN STOW
1618

ԱՐԵՒԵԼՔ ԾՐԱԹԵՐԹ ԿԱԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՊԱՐԱԿԱՆ. —

Բաժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 81) զրշ., դաւառներու համար 108 զրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Ձեռքէ վաճառում՝ ճասը փարա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդաւածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի՝ հրատարիչ դառնալով՝ նորանոր բարեփոխներու չնորհիւ, զորոս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԸՆԼԱԼՈՒ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն՝ ալ տեսալսանքներ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդաւածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-տեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական ևայլն, բացի գրական, բանասիրական գրութիւններէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նիւթերու ճօխ պէսպիսութիւն մը կը կազմեն:

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակուայի ցաւով՝ զայն քաշել կուտայ ճարտար ատամնաբոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակուան, կամ գուռօնի մէջ առնել կուտայ, ա'լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լաւ, ճարտար ու արուեստին գաղտնիքներուն զիտակ ատամնաբոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և գոհ մնալու մեծ պահանջութեամբ պէտք է դիմել հանրածանօթ ատամնաբոյժ Սալիկ էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պահէջ-Դարու:

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ՝ զրած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան մասնաւորապէս ծնողքներու և դաստիարակներու համար, որոնք կը փափաքին զիտնալ թէ ինչպէս կարելի է օգտակարապէս խօսիլ մանչերու, իրենց տարիքին յատուկ եղող մոլութեան վրայ և անկէ զգուշացնել զանոնք: Կատարեալ դեղագիր մըն է այս գրքոյը՝ զիջութեան դէմ: Գինը 5 զրուշ:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ՝ կը խօսի մանչերու յատուկ մոլութեան վրայ ըսէն իսկ մանչերուն, որպէս զի անոր բնութիւնը և վտանգաւորութիւնը հասկնան նոյն իսկ իրենք ու կամովին հրաժարին անկէ: Անգլիացի բնթերցողներէ ա'յնքան համակրութիւն վայելող այս գրքոյը հայերէնի թարգմանած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան հայ պատանիներու ծառայութիւն մը մատուցանելու համար: Բացարձակապէս վստահելի ու անօրինակ կերպով աժան — լոկ 40 փարա — որպէս զի մատչելի ըլլայ ամէն մանչու: Կեդրոնատեղին՝ Պալենց Գրատուն, Կ. Պոլիս:



Թ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԷ ԱՐՄԷՆ

55ԴԴ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 27

26 ՄԱՅԻՍ 1907

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

[ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՁ]

Դ.

Նախորդ յօդուածներով ներկայացուցինք Ղազարի ապրած դարուն եկեղեցականութեան վիճակը, իր ամենակարեւոր գիծերով, որոնք Ոսկեդարը կը պատկերացնեն իր հալածիչ ու դատապարտող տարբերուն ամբողջութեանը մէջ: Չծանրացանք ալ՝ Ղազարի եղած միւս ամբաստանութիւններուն վրայ՝ որովհետեւ անոնք աւելի կամ պակաս ազդուութեամբ՝ միշտ նոյն ուղղութեան մէջ՝ վեր կը բերեն իր դարուն եկեղեցականութեան ոգին, այն նախանձի և կոյր ատելութեան ոգին, որ պօգանք կ'առթէ: Երբ հանճարը, ողջ մտութիւնը, մարդկային կոչումին գիտակցութիւնը յարութիւն առած են ինկած կրօնականութեան մը ոսկրոտիէն, հին եկեղեցականներու կոյր վրիժառութեան երեւումը ուղած է կատարել գործ մը, քոնէ իր լինելութեան իրաւունքը կարենալ ապահովելու համար: Այս գօտեմարտին մէջ ալ նշանակութիւն չունին ո՛չ կրօնքը և ո՛չ եկեղեցին: Անձնականութեան կռիւն է, որ ծայր կուտայ իր ամէնէն տխրեղծ ու ազազուն երեւոյթին մէջ, հոգ չէ՝ որ անարժաններ յաճախ կրօնաւորի սքեմով կամ քահանայապետի պատմութեանով մը հանդիսադրեն ինքզինքնին, իբր կրօնքի շատագոյններ: Հիներու ցանկը կը փակենք Ղազարով և անոր առեւծ

ծանօթութիւններով, առանց անցնելու՝ յետագայ դարերուն եկեղեցականութեան, ուր պիտի տեսնենք, միեւնոյն անձնականութիւնը, միեւնոյն առեւտրութիւնը, հոգ չէ՝ որ զարգացած եկեղեցականներու դէմ յարուցուած հալածանքը անոնց մէջ *sistématique* և կազմակերպուած վիճակ մը ունեցած չըլլայ և կ'անցնինք արդի օրերուն եկեղեցականութեան:

Հայ եկեղեցականութեան խնդիրը ուսումնասիրուած պահուն, այսպէս, ոստում մը կ'ընենք և րոգ դարձն մինչեւ մեր ապրած օրերը: Կրօնական վէճերու և եկեղեցականներու հակառակադրութեան բաւիղին մէջ, ո՛րչափ ալ յառաջանանք, միշտ նոյն *cercle vicieux*ն է, զոր պիտի անցուդարձենք. և մեր տմէն քայլափոխին պիտի հանդիպինք նոյն անսիրելութեան և նոյն կրօնական հալածանքի կսկիծներուն, դրսերեւութային տարբեր փուլերով, տարբեր դրութիւններով ու տարբեր մանուածներով: Ժամանակադրական թուանշաններու և անուններու փոփոխութիւններուն մէջ պիտի կայանայ միայն տարբերութիւնը, որ տարբերութիւն մը չըլլալէ զատ, ապացոյց մը աւելի ընձեռած պիտի ըլլայ մեր վերլուծել ձեռնարկած դատին պաշտպանութեան: Եւ ցաւալին ա՛յն է, որ դարերու ընթացքին մէջ բնութարար անգամ երեւան եկած Հայ եկեղեցականութեան խնդիրը բնաւ չէ փոխած իր առանցքը և իր դարաւոր լինելութիւնը լծորդուած մնացած է միշտ ծնուցիչ միեւնոյն պատճառներուն: Պատճառի և արդիւնքի այս անյեղլի նոյնութիւնը մեզի առիթը կուտայ, որ եկեղեցական այս խնդիրին մեր օրերուն զգեստած երեւոյթները դիտելէ առաջ, հոս պարզենք, թէ որո՞նք եղած են Հայ եկեղեցականութեան այս գծախառ խնդիրին ծնուցիչ պատճառները:

Ա. — Ինծի համար այդ ծնուցիչ պատճառներէն առաջինն է մարդկային Եսը: — Չարիքներու զխաւոր ծնուցիչը եղած է միշտ Եսը, ըլլայ անհատներու թէ համայնքներու մէջ: Անիկա անհատին առհաւային ու բնական ժողովութիւնն է, որ արդեւիչ ուժ մը կ'ըլլայ իր սխալ կիրառումով, ուրիշներու յառաջդիմութեանը ճամբուն մէջ: Եսը իր բովանդակ գոհակութիւնով, անհատին ցոյց կուտայ ինքզինքը և իր ինքնութիւնը միայն, և ուրիշներուն վրայ տեսնուած առաւելութիւն մը իր սեփական իրաւունքներուն իբր ապօրէն ստացութիւնը կամ յախշտակութիւնը կը նկատէ: Եւ ասով իսկ կ'արթնցնէ ենթակային մէջ այլատեսութեան համոզումը, որ երթալով դաւանանք մը կը դառնայ, ոճրապարա կրօնք մը, եւամոլ մարդերուն մէջ: Այնպէս ետքը, անհատներ իրենք իրենց համար կ'ըլլան պաշտօնած կուռքեր, ամենասիրական թերափներ՝ իրենց անհատական՝ եւացած տաճարին, որուն առջեւ պէտք է ծնրադրէ ամբողջ մարդկութիւնը, ընկերական կեանքի համերաշխութիւնը (*solidarité*) ապահովել եթէ կը փափաքի: Եստեսներ իրենք իրենց աշխարհքն են, իրենց արեւելքը: Եսապաշտներուն համար մարդ-

կութեան ընկերական կազմուածքը ցնորք մըն է, գոյութիւն չունի բնաւ ուրիշներու կեանքի իրաւունքներով, նման վախճանականութեամբ գոյակցութիւնը (coexistence), և իրենք ո՛չ թէ մէկ անդամն են «ընկերական Մեծ-Մարմին»-ին, այլ բուն իսկ այդ Մարմինը: Ու այլ կը մոռցուի Մենենիոս Լեզրիպոյցի «անդամներու ստամոքսը» տուածին ընկերարանական ու բարոյական նշանակութիւնը, որ մարդկային հաշտ գործակցութեան անհրաժեշտութիւնը ցոյց տուող գործարանական (organique) կեանքէ առնուած մէկ զեղեցիկ պատկերն է և որ Ս. Պօզոսի կողմէ անքան ճափօրէն գործածուեցաւ՝ Քրիստոնէական եղբայրակցութիւնը, Քրիստոսի մէկ մարմինին անհամար անդամներու գործակցութիւնը մատնանշելու կրօնական ու բարոյական նոյն և մի նպատակի կատարումին մէջ: Քաղաքակրթութիւնը, սակայն, որ իր յառաջդիմութիւնը երո՛ւ միջոցին հաւասարապէս սրեց մարդու լաւ և յուսի միատունկը միանգամայն, զնեղով հիմունքը մարդկային ընկերական գործարանաւորութեան լաւագոյն մեթոտներուն, ընդլայնելով փոխադարձ օժանդակութեան պէտքին կալուածը, և ստեղծելով բնական ու գործաւորական հարկէն ծնած համերաշխութեան անհրաժեշտ կիրարկութեան բանաւոր սկզբունքները, մարդոց զգացուց իրենց ետին փոքրութիւնը և իրենց անկարողութիւնը՝ առանց արտաքին օժանդակութեան բան մը արտադրելու, կրցաւ սպաննել ենը դո՛նէ նիւթական և տարրային կալուածին մէջ. բայց՝ բարոյական տեսակէտով՝ մարդոց եաստիրութիւնը՝ մարդկային այդ «ազանութեան յաւիտենական պատրանքը» մնաց շարունակ: Եթէ այս եղած չըլլար իրողութիւնը, եկեղեցականութիւնը, և Հայ եկեղեցականութիւնը մասնաւորապէս, պէտք էր ըմբռնած ըլլար, թէ ինքը կրօնաւնկերական մարմին մը կը ձեւացնէ եկեղեցիին ծոցը, միեւնոյն Գլուխին կապուած բազմաթիւ անդամներով, որոնք միեւնոյն կոչումը ունին և միեւնոյն կրօնական նպատակը, միեւնոյն ուխտը ունին և միեւնոյն կրօնքը, և ուր անհրաժեշտ եղող այլասիրութիւնը, եաստիրութեան ազնուացած զուտ մէկ հատուածակողմը պիտի կրնար ներկայացնել շատ դիւրութեամբ, և մարդիկ ինքզինքնին գոհացուցած ասուն, միեւնոյն ժամանակ ուրիշներն ալ գոհացուցած ըլլալու, անոնց ալ սկզբունքները յարգած ըլլալու երջանկութիւնովը հպարտացած պիտի ըլլային դո՛նէ:

Բ.— Երկրորդ ծնուցիչ պատճառն է տգիտութիւնը: — Ետը ամէնէն աւելի կ'իշխէ հոն, ուր գոյութիւն չունին դաստիարակութիւնն ու զարգացումը, և տգէտը՝ ժանգոտած անհատականութիւն մըն է: Շատեր տգէտ կը մնան իրենց կամքէն անկախ պատճառներով. նիւթական դիւրութիւն կամ դժուարութիւն, մտաւոր յարմարութիւններ, ժառանգականութիւն կը դիւրացնեն կամ կը դժուարացնեն դաստիարակութիւնը, որուն պաշտօնն է գիտնական ու բարոյական կրթութիւն մը, զարգացում մը ըմբռնանել տալ մարդկային ընկերական մարմինին անձնիւր

անդամին, նկատի առնելով անոնցմէ իւրաքանչիւրին social հանգամանքը: Մէկ խօսքով, եթէ դատարարական իշխան նպատակն է մարդը հեռացնել իր այն նախնական վիճակէն, որուն bête humaine անունը տրուած է իրաւամբ, տգիտութիւնը՝ ուրեմն՝ ուրիշ բան չէ, եթէ ոչ շարունակութիւնը, վերապրումը այն հակամարդկային սովորութիւններուն, դաւանանքներուն և գեղծումի ընդոժին արամադրութիւններուն, որոնք պատահասք եղած են ո՛չ միայն մարդկային ընկերական մեքենային յօրինուածութեանը, այլ նաև անոր բնական քաղուածքին, որով մարդկութիւնը իր գերազոյն ու վախճանական նպատակին (fin) պիտի բարձրանայ, մերթ համաչափ ու յաճախ անհամաչափ քայլափոխներով: Բարոյականի մարդը, անկախ կրօնական սր և է ստրկութիւններէ, ջանացած է միշտ կարելիէն աւելի միջոցներ ստեղծել, և բնութեան ընձեռած անգիտակից դիւրութիւններէն նպաստաւորուիլ, մինչ կրօնի պաշտօնեան՝ խաւարամիտ ու շահագէտ իր հակումներովը ուղած է կտ մղել այդ դիւրութիւնները, իբր վտանգաւոր տարրեր կրօնական մարմինի մը յօրինուածքի պահպանութեան, կարծես ըսել տալու համար թէ տգիտութիւնը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ իրենց մտաւորական գործերը յոռի գործեր էին: «Գիտութիւն, լոյս» պոռագող այս դարուն մէջ՝ եկեղեցականութեան յետադիմութիւնը առեղծուած մը ըլլալու չափ տարօրինակ կը թուի մեզի համար: Այդ բաղձացուած լոյսը, գոյութիւն ունի մեր մէջն ու շուրջը, բայց անոնց համար, որոնք անոր կը հասնին, առանց իրենց հոգին վարժեցուցած ըլլալու անոր քմայքներուն (perception): «Այդ լոյսը և բոցերը, կը գրէ Մէթէրլինք, ա՛յնչափ մթին են և ցրտին, իրր թէ նկարուած ըլլային:... Միջօրէի արեւը կ'իջիւն մանչող ծովուն վրայ, ուր մարդուն հոգեբանութիւնը կը խառնուի Աստուծոյ հոգեբանութեան»: Մեր եկեղեցականները գրեթէ միշտ նմանած են նոր-պղատոնական նկարին մէջ ցուցադրուած աչքին, որ «լոյսէն կը հեռանայ՝ խաւարը տեսնելու համար, որովհետեւ խաւարը լոյսի միջոցով չ'իրնար տեսնել. և սակայն, առանց լոյսի չտեսնել լնաւ. այսպէս, անիկա չ'իրնալ տեսնելուն համար միայն խաւարները կը տեսնէ ա՛յնչափ, որչափ բնականօրէն տեսնել կարելի է»: Գրեթէ միեւնոյն ժամանակ կը խօսէին Սոկրատ և Եգիպտական Քրմութիւնը: Սոկրատ, առանց նուիրապետական կարգի (ordre hiérarchique) մը վերաբերելու, իր մտքի բարի յօժարութիւններուն ուժով տեսաւ միտքին այդ չարիքը և անոր վատախտարակ արդիւնքները, և անոր ծնուցիչ պատճառը դտաւ տգիտութեան մէջ, որովհետեւ իր բարոյախօս փիլիսոփայի ըմբռնումով, գիտութիւնը առաքինութիւն մըն էր: Չարիքը արմատախիջ ընկելու համար պէ՛տ է դաստիարակել: Ահա իր կարգախօսը, իր բարոյական ուսուցումին ալֆան ու օմեղան: Եւ Սոկրատ, իր այս վերլուծական սկզբունքով նպատակ ունէր մարդը «Մարդ» չ'իյնել և բերել

դնել զանի իր արժանաւոր դերքին, իր վայելուչ կոչումին մէջ: Տգիտութեան բարեկամ եգիպտական Գրմութիւնը, որ հակառակ ալ անցեալին մէկ յիշատակը ըլլալուն, բոլոր դարերու կրօնաւորութիւնը և եկեղեցական գաւաղը պիտի ցուցանիչէ իրմով, արհամարհեց ո'չ միայն դաստիարակութիւնը, Սոկրատի ըմբռնումով յղացուած դաստիարակութիւնը, այլ նաև անիծեց բնական ա'յն զիւրութիւնները, օրինակի համար ծովը, որոնք զարգացումի և յառաջդիմութեան ուղիին մէջ նորա նոր ընկերական պատուաստումներ պիտի գործէին, աւելի այլասէր և աւելի մարգասէր ընելու համար մարդկութիւնը, և ուզեց կրօնական անըմբռնելի առեղծուածներու և անլոյս տգիտութեան բովբէն անցնելով, մարդը «հրեշտակ» մը շինել: Այն ատեն տակաւին չէին կրնար ըմբռնել, թէ «մարդկային հրեշտակը» պատրաստելու միակ միջոցն է, անջատել զինքը տգիտութենէն ու բարոյացնել զինքը, թէ տգիտութեան միջոցով մարդը «հրեշտակ շինել ուղղը զանի անասուն մը կը շինէ» [Փասագալ]: Եւ եթէ երբեք քրիստ. կրօնքը օրէ օր իր հմայքը կը կորսնցնէ զարգացածներու մօտ, անոր պատճառը պէտք է փնտռել կրօնքի պաշտօնեաներուն գրեթէ ամբողջին մէջ գոյութիւն ունեցող տգիտութեան սիրելութեանը մէջ: Պէտք է ըսել, թէ առանց բարոյականի կրօնք մը, հակառակ իր վայլուն ծէսերուն, որ և է հեղինակութիւն չկրնար ունենալ: Նոյն իսկ կրօնական բաժնին մէջ բարոյական արժանապատուութիւնն է, որ զօրաւոր պիտի կըռէ, և ինքզինքը պիտի պարտադրէ ամէնուն, և «մարդու ամբողջ արժանապատուութիւնը կը կայանայ խորհուրդին մէջ: Պէտք է որ ասկէ բարձրանայ ան (relever), և ո'չ թէ միջոցէն ու տեւողութենէն, զորս չկրնար լեցնել ինք: Պէտք է աշխատիլ, ուրեմն, լաւ խորհիլ»: Ահաւասիկ բարոյականի սկզբունքը: Գոնէ այս է Փասգալի և ամբողջ intellectualismeի ընդհանուր դաւանանքը: Տգիտութիւնը չարիք մըն է, ընդունինք ասիկա. և ատով իսկ հաստատած պիտի ըլլանք յարաբերական ճշմարտութիւնը լատինական սա առածին. omnis peccano est ignorans. ա՛հե՛ն մեղանչող Տգեհ ե: Հայ եկեղեցականութեան՝ հինին և նորին մէջ՝ կազմող տարրերը ընդհանրապէս կուսակիցները եղած են տգիտութեան, իրենց գոյութեան պատճառը փնտռելով անոր մէջ. և այդ տգիտութեան մէջ իսկ յանդգնած են հաւատքի անունով պարծիլ, առանց գիտնալու Թալմուտի սա առածը, թէ Տգեհ մը հաւատացեալ չկրնար ըլլալ: Գիտութեան և դաստիարակութեան գործը գերազանց գործն է կրօնի, քանի որ Թօուօ ըսածին համեմատ. «Այնչափ աւելի կրօնք կայ գիտութեան մէջ, որքան աւելի գիտութիւն՝ կրօնքին մէջ»:

ՄՈՒՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ

Երբ մարդ ետևն ի յայտ եկաւ շանջիին վրայ մեր երկրին,
 Իրեն ծընունդ տուող հողին նշանակեալ կոչս եր տալաւ ին.
 Իր մեծ մարմնոյն նեղուկ էին կարշնեղագոյն ոսկրոսի,
 Զսպանակներն համակ շարուած զնդերներով կտրովի:
 Բիւ հարուածներ կտրող էին վնասել իր հաստ կեղեւին,
 Ոչ տալ, ոչ տուր, ոչ ձորութիւն իր ուժն ընկնել կրնային.
 Հագարաւոր արեգակներ մերկ, հոլակի զինք տեսն
 Երկինքին տակ փայտաւոր, քափառաւոր զերբ գագաւ.
 Ծանօթ չէր դեռ մարդոց՝ երկաթն ու շարքաւ ալ քաղուկներ
 Զէին գրծեր դեռ, աղօսներ, քուրիեր չէին դեռ տնկեր:
 Եւ արօրի կոր կոր մաներ դեռ այն տեսն չըկային
 Ոչ ալ մանգաղն որ կը կտրէր մեծ ծառերու ուսերն հին:
 Բարիքն երկրի ու երկինքի ու պարգեւներն արեւուն.
 Ատոնք էին անգուգալան հարստութիւնն իր համբուն:
 Եւ մեր մայրիկի աչք ինքնաբեր ճշտեմունքն գոհ համակ,
 Հանդարտ կեանք մը կը վարէին անտուններու մայրիկ տակ,
 Կաւ ձեռնովն ին կը փայտէին մարգեւիտի հասերէն,
 Որոնք ձրմունցն այժմ իսկ դաշտը ծիրանեփայլ կը պնտեն.
 Այդ հեռաւոր դարերուն մէջ՝ հողն, արեւի թեղմանաւոր,
 Մարդոց կու տար ձոխ պրտուղներ արեւի կուռ եւ խոշոր,
 Եւ Բրնձրիւն՝ ձոխ սեղան մը ձօնուած կեանքին նորածպիտ,
 Իր ծաղկաւիտ քաղաքները կը ծաւալէր զեղափքիք.
 Դէտեղերէն հըրապորտուած, կը խըմէին վրասկէն.
 Դեռ այսօր իսկ շէնքերն ի վար կը հոսի ջուրն յարօրէն,
 Եւ ծառաւի անասուններ կը հրաշիտէ ձայնն հեռուն.
 Ու կ'երթային զիշերուան դեմ դեպ ի տունը դիպունդոյն,
 Ուրկէ վէտերն աղբիւրներուն սփռոցի պէտ տարածուած
 Կը հոսէին կողերն ի վար սեպ խառակին, ժայռին քաց,
 Եւ իջնելով ու իջնելով կը հասնէին մամուռին.
 Հոն ցայտելով, պղպղջալով դաշտերուն մէջ տնկին.
 Ու կըրակի գործածութեան անոնք էին անգիտակ,
 Մերկ մարմիններն լոյն իսկ ծածկել չէին գիտէր փողի տակ,
 Դիակներէն անասունին շինելով ձոր՝ մորթեղէն.
 Ու շէնքերու փայտերէն կ'որոնէին ապարէն.
 Անտուններուն տակ կ'ծկրած մացառներով միշտ քափուն
 Խոյս կուտային անձրեւներէն, թռնուրներէն քիտ հովուն.
 Ու չըկային սիրոյ կայլեր եւ արարներ համերաշխ,
 Կը գրաւէին, կը կայսէին աւարն իրենց քախսաքաշի:
 Կը հոգար տնկն ու ինքզինքն համար կ'արդէր տնկն ոք.
 Բաղն էր միայն առաջնորդին, եւ օրէնքն ուժն էր լոյ:

Ու քերտոսն էին անոնք, եւ ձեռքերն ի կաշտմունքն
 Բարերն հեռուանց եւ մօտ առ մօտ յորս անկաններն ալ ուժգին
 Հարուածներով կը սպաննէին միապետը քաղաքին:
 Մերք փայտելով իրենց որսին առջեւէն, մերք յարապակ,
 Կոչս մեծաքանակ համակ հագուած վարագներու միջն նշան:

Ուր որ վրայ հասներ գիշերն՝ այնեղ հանգիստ կ'առնէին
Դայարիիւմ ու ուսերով ֆողածածկած մարմիննին:
Ու լռակաց խոր ֆունի մը անդորրին մէջ թխաբեր
Գոչիւններով՝ գիշերային մութը չէին խըռովեր,
Անյայտացած արեգակը չէին ինկրեր անխօսուկ
Մերկ հողին վրայ, մերկ իրենի աշ կը սպասէին անշըշուկ
Որ երկինի սայ ընդ ասպարեզ արեգակին շուստիւտ:
Վստահ էին թէ մըքուքեան կը յայտնուէ լոյս պայծառ,
Եւ լոյս օրումն փախուսն իրենց զարմանք բընաւ չէր ազդեր.
Թէ աշգն անվրէպ կը դառնայ մեզ՝ ուսած էին մանուկ դեռ,
Եւ վախ չէին ըզգար երբեք թէ գիշեր մը մշտաւ
Կրնայ ծածկել յաւերժայիս թիւղերի ջահն՝ արեւ:
Ու մանաւանդ կը վախճային զարթումներէն մահաբեր,
Չորս իրենց մերթ կը սպառնային սեւ գիշերումն դարաններ.
Յանախ վարագն յարձակումովն անակրկիտ, ամեհի՝
Կամ առիւծը՝ դուռս կը վանէր գիշերի որչէն վայրենի,
Եւ անարեկ բսուներին մէջ ամեհն աշ խոյս կու տային
Արիւնխաւած զազաններուն քողով խոտ խշտակին:

ԼՈՒԿՐԵՏԻՈՍ

Ճրանսերէն բնագրէն

Հ Բ Ա Ն Տ Ա Ս Ս Տ ՈՒ Ր

ԼՈՒՆ ՀԻՒԾՈՒՄ

Երագներու կնիւնութեան անճանաչու,
Ըղձանկներու բոց սկնդովը սարսքումն,
Աչկերդ յառած անհունին լուրք ալբերուն,
Վարդ փրփումներ հոն որուն՝ ոսկերայր...

Սնդուսներու, շղարօցներու ծոցին մէջ,
Կապոյցներու, փրփուրներու սիրտհար,
Գիրգ պաշտումներ միտս անըջել խօլաբար,
Եւ հանչնալ կեանքն իր յոյսերով վաղաժեշ...

Ինչո՞ւ զգալ, ինչո՞ւ սիրել եւ բաղձալ
Գեղեցիկին ու մաքուրին երկնային,
Հոգիդ գուրկ է երբ գգուանքէն փողք յոյսին,
Երբ չեն տոգնէր հոն գոյսը յոյզեր հոգեզմայլ:

Ու կը հիւծի անբիծ սիրքը յամբօրէն,
Չհասնելով իտալի բարձունքին,
Մինչեւ այն օրն ուր յոգնած եւ անձկագին,
Մաշի, հոսնի անոնց կրծող կարօտէն:

ՊԵՐՃՈՒՀԻ ԵԱԶԸՃԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԱՏՈՒԵԼԻ ՓԷՇԵՍԱԼՔԵԱՆ

—•••••

[ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾԸ]

Գ. —

Դառնանք հիմա Փէշտիմալճեան Պատուելիին ուսուցչական պաշտօնավարութեան Բ. Շրջանին՝ Մայր-Դպրատան մէջ, Աս՝ տեղի կ'ունենայ 1824ին, երբ ինք առհասարակ ամէնուն համակրութիւնը կը վայելէր: Յիշենք իր անթիւ համակրողներուն մէջ միայն Կարապետ Պատրիարքը և Աղգին անդուգական բարերարը՝ Յարութիւն Ամիրա Պէշճեանը: Մայր-Դպրատան մէջ Փէշտիմալճեան աշակերտներուն կը սորվեցնէ Հայերէն իր ձեռնգրով, Ճարտասանութիւն (կ'աւանդեն Աղոնցի գիրքին վրայ), Տրամաբանութիւն, Քերականութիւն և Կրօնագիտութիւն [1]: Ըսենք հիմակուց իսկ թէ՝ Մայր-Դպրատունը մէկն էր, ո՛չ, առաջինը պէտք էր ըսել, այն կրթարաններուն, ուր բարձրագոյն ուսում կ'աւանդուէր: Փէշտիմալճեան հոգին էր այս կրթարանին: Դիւրուսոյց մեթոտ ունէր. ասոր կը վկայեն շատեր: Իր աշակերտներէն մէկը՝ որ դեռ կ'ապրի Իսկիւտար, Թօփհանէ Օղլու, խոր ծերութեան մէջ, իր սիրելի ուսուցչին յիշատակով ոգեւորուած՝ պատմեց ինծի թէ՝ ան միշտ իր միտքը լաւ բացատրելու համար աշակերտին ծանօթ, ընտանի առարկաներէն օրինակ կը բերէր շարունակ: Աւետիս Պէրպէրեան՝ դարձեալ իր աշակերտներէն՝ կը վկայէ իր պատմական աշխատանքի մասին մէջ թէ. «Փոյթ մեծ ունէր միշտ հեշտընկալ և ակորժելի առնել զուսմունս ի ծանօթից և ի դիւրոց յառաջանալ յանձնաթման և ի դժուարինս»: Իր բոլոր գրական աշխատութեանց մէջ կը գտնենք զինքը պարզաբան, յստակաբան: Առնենք՝ օրինակի համար՝ իր քերականութիւնը: Այն օրերու քերականութիւնը չափ տարբեր էր հիմակուաններէն. աշակերտին յիշողութիւնը չափազանց կը ծանրաբեռնուէր կանոններով: Այն օրերուն՝ վեցի տեղ տասը հոլով կար և աշակերտ մը սա կերպով պիտի հոլովէր՝ օրինակի համար՝ արքայ գոյականը.

Ուղղ.	արքայ
Սեռ.	արքայի
Գործ.	արքայի
Պարտ.	արքայիւ
Հայց.	զարքայ
Պատմ.	զարքայի
Բացրտ.	յարքայի

[1] Խաչատուր Պարտիզպանեան խոսքերէն կ'աւանդէ [Ընդարձակ Օր. էջ 202, Տարի 1901].

Տում. յարքայ
Դերգ. յարքայի
Լոյճ. ո'վ արքայ

Հարեւանցի բաղդատութիւն մը Փէշտիմալճեանի Քերականութեան հետ, որոշակի կը հաստատուէ առաջինին օգտակար, գնահատելի պարգևութիւնը: Օրինակի համար՝ Տ. Մեսրոպ Քահանայ՝ անուրնին չորս սեռ կուտայ (արական, իգական, անորոշ և չեղոք): Փէշտիմալճեան բոլորովին կը վերցնէ անունին սեռը: — Քահանան՝ անուրնի երեք տեսակ կը ճանչնայ (նախատիպ [հիմա արմատ], ածանցեալ և փաղառեալ): Փէշտիմալճեան միայն երկուք. (նախատիպ և ածանցեալ): Փէշտիմալճեան Տ. Մեսրոպ Քահանայի նշանակած 21 տեսակ մակբայները 13ի իշկեցուցած է. 16 տեսակ շաղկապները՝ 12ի. 10 տեսակ միջարկութիւնները՝ 6ի: Վերջապէս առանց ուրիշ մանրամասնութիւններ յիշելու, զիտենք ընդհանուր կերպով թէ՝ Փէշտիմալճեանի Քերականութիւնը պարզ, մեթոտիկ և պարզաբանեալ է, քայլ մը աւելի մօտեցած մեր օրերու քերականութեան. և ձեռնահասներու վկայութեան համեմատ՝ իր ժամանակին լաւագոյն դասագիրքն էր^[1]: Այն օրերուն՝ քերականութեան ուսումը մեծ կարևորութիւն ստացած էր. ծնողքներ հպարտ կը զգային ինքզինքնին՝ երբ իրենց զաւակները սկսէին քերականութեան դաս առնել: Ընտանեկան համախմբումներու մէջ խօսակցութեան սիրելի նիւթերէն մէկն ալ քերականական էր: Եթէ իրենց մէջ գտնուէին երկու տարբեր կրթարաններու աշակերտներ, անմիջապէս հրաւեր կը կարգային այդ դեռատի ախոյեաններուն՝ որ ի հանդէս բերեն իրենց քերականական բոլոր հմտութիւնը: Այս գրական պայքարին մէջ յաղթական աշակերտին հայրը գոհունակ դէմքով գովեստը կը կարգար իր զաւակին անզուգական վարժապետին ծովացեալ հմտութեան և միւս առաւօտ գրեթէ միշտ անվրէպ՝ ինքը անձամբ և կամ զաւակին ձեռքով իր շնորհակալութեան հնչողն ապացոյցը կուտար քերականագէտ ուսուցիչին: Աշակերտները շատ անգամ իրենց դպրոցին՝ ուր կ'ուսանէին, և վարժապետին՝ որուն կ'աշակերտէին, պատիւ բերելու համար՝ զարմանալի հնարքներու կը դիմէին, օրինակի համար, նոր բառ մը կը կերտէին և երբ մրցման մէջ իրենց հակառակորդը նորակերտ բառին նշանակութիւնը չգիտնալով չկարենար պատասխանել, դիւրաւ կը շահէին յաղթութիւնը. ահա երկու նմուշ այս հարցումներէն. — Ըստ մասանց բանի զի՞նչ է բառս շրթնու շղթայաշար. — Ըստ մասանց բանի զի՞նչ է բառս ֆշիորիկ: Եթէ փոքրիկներուն մէջ կար զանազաներու պայքարը, մեծերուն մէջ ալ կար հսկայից պայքարը. ա'ս՝ տեսակ մը տաղաչափական մրցում էր զլիւսուոր գրագէտներուն կամ վարժապետներուն մէջ: Կ'առաջարկուէր, օրինակի համար, տրուած նիւթի մը վրայ քերթուած մը

[1] «Մանկուծեան Յիշատակներ» [Մասիս 1893].

հիւսել, որուն ըստերը անայք կամ այրահաւաք ըլլային: Տանք նմուշներ երկու տեսակէն ալ: Իզմիրէն՝ Վանանդեցի Տ. Յօհաննէան Գրիգոր վարժապետ ՅՈ տողէ բազկացեալ անայք տասնեւինոտեան մը դրած էր, որ սապէս կը սկսէր.

Եթէ սոսիս քողից խոճի զկոծ կոծել զողորմելոյն

Կոծե ոչ զոք միկն ի կշիւ ցեղիս դիցե...:[¹]

Փէշտիմալճեան Պատուելիին աչակերտ՝ Աւետիս Պէրպէրեան աւելի դժուարինին ձեռնարկած է, գրելով ՅՁ տողէ հնգետասանոտեան մը, որուն առաջին տողին առաջին գիրը (գ), երկրորդ տողին երկրորդ գիրը (ր), երրորդ տողին երրորդ գիրը (ի), չորրորդ տողին չորրորդ գիրը (զ), և այսպէս յառաջատուաբար մինչեւ ՅՁրդ տողին վերջին գիրը (ջ), կը կազմեն «Գրիգորի վարժապետի Տէր Յօհաննէան խնդալ»։ — Խաչատուր Պուէտ Միսաքեան, դարձեալ Փէշտիմալճեանի աչակերտներէն՝ Վանանդեցի Գրիգոր վարժապետի վերոյիշեալ անայք ոտանաւորին իբր պատառիսան, դրած է այրահաւաք ոտանաւոր մը, որուն երկու տողերը միայն կը նշանակենք հետաքրքրութեան համար.

Աւա՛ղ հազար կարդար աննայն ցաւ տառապաւոս զայն կաշան.

Կայր կաշաղակ խղցրաբարսառ զաղղակ քառնայր քարճոխանէ, եւրն:

Անցողակի դիտենք որ այդ դարուն ամէն տաղաչափ՝ բանաստեղծ կ'ըսուէր: Այդ ժամանակի բանաստեղծութիւնը ընդհանրապէս լուրջ և կրօնական էր, սովորաբար միջակ արտադրութիւններ՝ լեզուի, ներշնչումի և գաղափարի տեսակէտներով: Այս միջակութիւններէն վեր է Փէշտիմալճեան Պատուելի, որ կը փայլի իր ստեղծական մտքին յղացումներով և խանդոտ սրտին ղեղումներով: Իր լեզուն անուշ, գեղեցիկ գրաբար մըն է. իր գրութեանց մէջ չենք տեսներ հետեւողութիւն «քերթողական արուեստին» որ, չատ կանուխ, Սիւնեաց դպրոցին հետ ծագում առաւ և որուն վերջնձիւղումը տեսնուեցաւ՝ ԺԸ. Դարուն Ադրիանիանին ափերուն վրայ. իր ուղղութիւնը լեզուի մէջ՝ եղաւ ան՝ զոր յետոյ Վիեննական Մխիթարեանները կատարելութեան հասցուցին Ոսկեղարեան Հայերէն անունին տակ:

Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան քաջ հայկաբան ըլլալէ զատ՝ հմուտ էր հայ գրականութեան և եկեղեցական պատմութեան, Արեւելեան և Արեւմտեան Եկեղեցիներուն աստուածաբանութեան, ընդհանուր եկեղեցական Պատմութեան: Զօրաւոր յիշողութեան կարողութեամբ օժտուած էր. կրնար հիանալի դիւրութեամբ և ճշգրտութեամբ ըսել րեւանացի ամբողջ հատուածներ, երեսներ Ս. Դիքքէն և նախնեաց գործերէն: Գործօն և հետաքնին միտք մը ունէր, միշտ փափաքող և աշխատող անձանձիր՝ հասկնալու իրերու ինչոյն: Շատ աշխատասէր էր.

[¹] «Մանկութեան Յիշատակներ» [Մասիս, 1893].

բացի դատախօսութեան պահերէն, կը գտնուէր իր խուցը, ուր կամ ընթերցումով և կամ գրութիւնով կը զբաղէր: Իր արտաքինն ալ նուազ պատկառազգու և յանկուցիչ չէր: Այս միջոցին ալեգարդ էր, միջահասակ, թաւ յօնքերով՝ որոնք մինչեւ աչքերուն վրայ կը կախուէին. ունէր կորովի ձայն մը և իր խօսքերուն մէջ կը դնէր չնչոտ մը՝ որ աղարդիւն, անազգեցիկ չէր սահեր, անցներ ունկնդիրին հոգիին վրայէն: Այսպէս կը շարունակէր իր պաշտօնը ամենամեծ արդիւնաւորութեամբ Մայր-Դպրատան մէջ, մինչեւ այն օրը, երբ Հօճա-Փաշայի սոսկալի հրդեհը (1826, Օգոստ. 18) բաղձաթիւ չէնքերու հետ մոխիրի կը վերածէ նաև Մայր-Դպրատունն ալ:

Թողով որ արեանցաւեր Մայր-Դպրատունը շուտով յառնէ իր աճիւններէն, անցնինք համառօտ կերպով ներկայացնելու Գրիգոր Փէշտիմալ՝ ձեռնը իր գլխաւոր գրական երկասիրութեանց մէջ:

1. Կրթութիւն Քաղաքավարութեան, 1823ին հրատարակուած. այս գիրքով՝ Կ. Պոլսոյ աշխարհականներէն առաջինը կը հանդիսանայ, աշխարհաբար գիրք մը գրելով ա՛յնքան կոկիկ լեզուով. ահա նմուշ մը իր ոճէն. «Եթէ մէկը մարմնոյ արատ կամ տգեղութիւն ունի, անոր վրայ մի՛ ծիծաղիք, կամ եթէ մէկը վարժապետէն չեխ լսեր է կամ ծեծ կեներ է, անոր երեսը մի՛ տաք և ուրիշին մի՛ պատմէք»:

2. Վարժութիւն Բարոյի Խոստովանութեան. աս ալ աշխարհաբար գրուած, տպագրուած Զմիւռնիա 1843ին, իր մահէն վերջը:

3. Տրամաբանութիւն ի Պէսս Համբակաց, 1854ին տպուած:

4. Բերականութիւն Գրաբարի, 1829ին տպուած, իր ժամանակին լաւագոյն քերականութիւնը:

5. Դիմաւորութիւն ի Զարչարանս Քրիստոսի, գրաբար քերթուած, 1845ին տպուած:

6. Լուսաշարիդ. Նիկիոյ Հանգանակին պարզաբանութիւնը, տպուած 1848ին: Փէշտիմալձեան Պատուելի այս երկասիրութեան մէջ կը ներկայանայ իբր քաջ կրօնագէտ. շօշափած է և հերքած զանազան ազանդաւորներու կարծիքներ. այս գեղեցիկ աշխատասիրութիւնը կրնայ նկատուիլ իբր յաջող փորձ մը Ազգ. Եկեղեցիի դաւանաբանութեան:

7. Փէշտիմալձեան Պատուելիին աշխատասիրութեանց ամէնէն կարեւորն է ապահովաբար Հայ Լեզուի երկնատոր Բառգիրքը, որուն հրատարակութիւնը կատարած է իր աշակերտներէն Յովհաննէս Տ. Պօղոսեան 1844ին: Հրատարակիչը Յառաջաբանին մէջ կը պատմէ թէ՛ իր ուսուցիչը պատրաստած էր յոգնավատակ աշխատութեամբ բառաբան մը, զոր 1816ի հրդեհը մոխիր դարձուցած էր իր նորաչէն տան հետ, Կէտիկ-Փաշա: Շատ տարիներ վերջը՝ Փէշտիմալձեան Պատուելի, Կարապետ Պատրիարքի օրով և յանձնարարութեամբ կը ձեռնարկէ նոր Բառարանի մը պատրաստութեան, գրաբար և աշխարհաբար բացատրու-

թեամբ: Կը սկսի տպագրել զայն և կը հասնի մինչեւ Դ. գիրը, երբ կ'ընդհատուի տպագրութեան գործը, որովհետեւ այս միջոցին կը ձեռնարկէ՝ հոգեւոր բարձրագոյն իշխանութեան յանձնարարութեամբ՝ սրբագրելու Յայտնառութիւն, Տէր Խորայելի ձեռագիր օրինակին համեմատ: Դրիգոր Պատուելի կարեւոր յիշատակարան մըն ալ կցած է սրբագրուած Յայտնառութիւն, որուն տպագրութիւնը աւարտած է 1834ին: (Հնէնատուած Բաղդիրքին տպագրութիւնը կատարուած է իր մահէն վերջը աշակերտներուն ձեռքով (1844):

Մեր կրթական Տարեգրութեան մէջ յիշատակութեան արժանի կարեւոր դէպք մը պատահած է 1828ին: Պաղարցի Կարապետ Պատրիարք, սրբագումար ժողովին հետ համախորհուրդ, կը կազմէ առաջին անգամ Ուսումնական ժողով մը, որուն կ'անդամակցէին՝ քանի մը վարդապետներու հետ, ժամանակին նշանաւոր վարժապետներէն ոմանք: Պէտք է ըսել թէ՝ Դրիգոր Պատուելի ասոնց անհրաժեշտ խորհրդականը և գործակիցն էր: Առաջին անգամ էր որ Պատրիարքարանը կը ջանար իր հսկողութեան տակ առնելու բոլոր կրթական հաստատութիւնները: Այս տեսակ որոշումի մը կենսական կարեւորութեան վրայ ո՛ր և է խորհրդածութիւն ընել աւելորդ է: Միայն ցաւալի է գիտել հոս թէ՝ ժամանակին կրօնական վէճերը կարեւոր, ձեռնհաս անձերուն ժամանակը գրեթէ բոլորովին գրաւելով՝ արգելք եղած են յիշեալ ժողովին կրթական գեղեցիկ մտածումները գործի վերածելու և աւելի արդիւնաւոր վիճակի մէջ դնելու կրթական յարկերը: Այս միեւնոյն թուականին (1828) Յարութիւն Ամիրա Պէղճեանի մեծագործ կրթասիրութիւնը Հօճա-Փաշայի հրդեհէն վերջը՝ այրած Մայր-Դպրատան տեղ կը կանգնէ Պէղճեան Ուսումնարանը, որ ոչ միայն այդ ժամանակի Կ. Պոլսոյ Բարձրագոյն կրթարանը կ'ըլլայ, այլ նաեւ կը ծառայէ Աղգին՝ իբր Ընծայարան: Դրիգոր Պատուելի Փէշտիմալճեան Տնօրէն և գլխաւոր ուսուցիչ կը կարգուի, և այսպէս կը հասնինք Փէշտիմալճեանի կեանքին թէեւ վերջին, բայց ամէնէն օգտակար, ամէնէն փառաւոր հանգրուանին: Պահ մը քննութեան առնենք թէ՝ ի՞նչ նկատումներ ծնունդ տուած են այս Ուսումնարան-Ընծայարանի հաստատութեան:

Եկեղեցականներուն անկեալ վիճակը առհասարակ դիտողութեան և գոգոհութեան առարկայ եղած էր: Անոնց ագիտութիւնը թէ՛ Ս. Դրոց և թէ՛ Արտաքին գիտութեանց մէջ, անոնց վարած կեանքին աններդաշնակութիւնը քրիստոնէական կրօնքի ոգիին հետ՝ յառաջ բերած էին ժէ. դարուն մէջ հակադդեցութիւն մը: Հանրութեան փափաքն էր տեսնել եկեղեցականութիւն մը հոգեւոր և ուսեալ:

[Յաջորդով]

ՄԻՆԱՍ ՄԱՆԵԱՆ

ԻՍՍԱՍԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Սովորաբար մարդիկ կամեցողութեան տէր են, կ'ըսուի, բայց իրականութեան մէջ շատ անգամ ո'րքան հեռու է ասիկա ճշմարտութեան մօտ ըլլալէ: Կեանքի մէջ բացարձակ կամքի գործը կարծուածէն շատ աւելի հազուադէպ է: Մանուկին ամբողջ գործերը հաճոյքի և տնաճութեան առանցքին շուրջը կը դառնան և կատարելապէս բնազդական են: Մարդկութիւնը իր նախնական, վայրենի վիճակին մէջ ալ ճիշդ այդ բնազդական կեանքը ապրած է, մինչև որ հասած է բանականութեան և դատողութեան ստեղծած քաղաքակրթութեան ներկայ աստիճաններուն. և արդէն մանկութիւնը՝ արագաբար անցնելով ճիշդ այն շրջաններէն որոնցմէ անցած է մարդկութիւնը դարերու տեւողութեան միջոցին, մարդկային հոգիին նախնական և յաջորդական փուլերը կը յիշեցնէ և կը վերաբառադրէ:

Մարդերու մեծագոյն մասը, սակայն, դեռ մինչև հիմա չի տարբերիր մանուկներէն: Կայ դասակարգ մը, բոլորովին բնազդական՝ *impulsif* մարդոց դասակարգը՝ որուն բովանդակ արարքները ճիշդ նոյն անմիջական հաճոյքի և տնաճութեան առանցքին շուրջը կը դառնան: Ասոնք վայրկեանական սպաւորութիւններու, գրգռութիւններու, բաղձանքներու կամ փոթորիկներու ազդեցութեան տակ կը գործեն այն բոլոր ֆիզիքական և բնախօսական արարքները՝ որոնց կը մղուին կամ որոնք իրենց հաճելի կը թուին, առանց խորհելու, առանց երբեք ունենալու բարոյական նկատումներու կամ հետեւանքի մտահոգութիւնը: Բայց պէտք է դիտել նաև հաւասարապէս թէ՛ այս դասակարգէն դուրս, պարկեշտ, զարգացած, դատողութեան տէր մարդերու մէջ ալ իրերը տարբեր չէ որ տեղի կ'ունենան շատ անգամ: Ո՛րչափ բարի, ազնիւ և ամէն լաւ տրամադրութիւններով տոգորուած անձեր կան, բարոյականի ամէնէն գերազանց ըմբռնումը ունեցող, որոնք սակայն չեն կրնար զսպել իրենց բաղձանքները, փոթորիկները, կիրքերը, որոնց բովանդակ լաւ տրամադրութիւնները արժէք մը չեն ունենար՝ զիրենք արգիլելու համար այն բոլոր բնազդական արարքներէն՝ որոնց ակամայ կը մղուին, արտաքին սպաւորութիւններէ գրգռուած բնազդումներու ազդեցութեան տակ, մինչդեռ իրենց մեծագոյն փափաքն էր տեղի չտալ և յաղթել բնազդումի պահանջման: Այս կամ այն մոլութեան անձնատուր եղած և փորձութիւններու չդիմացող բոլոր պարկեշտ մարդիկը՝ որոնք հակառակ իրենց փափաքին, չեն կրնար հրաժարիլ իրենց մոլութենէն կամ ներկայացած փորձութեան մը յաղթել, այս տեսակէն են ահա: Այս տեսակ պայմաններու տակ զանուոգ անձերու մէջ ընդունայն է կամեցողութիւն փնտռել, որովհետեւ կամքի տէր էակ մը, որչափ ատեն որ իր կարողու-

թինէն և կամեցողութիւնէն անկախ եղող յայտնի պատճառի մը յարկին տակ չի գտնուիր, պէտք էր որ ուղածը ընէր, չուղածը չընէր, մինչդեռ իրականութեան մէջ մարդիկ, մեծագոյն մասով, կիրքերու մէջ արտաքին տպաւորութիւններու և միջավայրային ազդեցութիւններու իրենց մէջ արթնցուցած բնազդական մղումներուն, բաղձանքներուն, անորոշակիներուն անձնատուր եղած են: Ազատ կամքի վարդապետութիւնը հին դարերէ ի վեր իմաստասէրներու միջեւ վիճաբանութեան առարկայ եղած է, և դարմանալին այն է որ քրիստոնէութեան մեծ առաքեալը՝ Ս. Պօղոս գրեթէ նոյնքան կը մերժէ այս տեսութիւնը, որքան կը հերքէ արդի նիւթապաշտ իմաստասիրութիւնը, կեանքի ու հոգիի բոլոր երեւոյթները քրիստոնէական ու բնագիտական իրողութիւններ համարելու չափ առաջ գացող իր վարկածներովը: Այսպէս՝ Ս. Պօղոս կ'ըսէ. «Քանզի ինչ որ կ'ընեմ, չեմ գիտեր, չէ թէ ինչ որ կ'ուզեմ այն կ'ընեմ, այլ ինչ որ կ'ատեմ այն կ'ընեմ, բայց թէ որ չուղածս կ'ընեմ, հաւանութիւն կուտամ օրէնքին թէ լաւ է: Գիտեմ թէ իմ մէջս բարի բան մը չի բնակիր, զի թէև կամք կայ քովս՝ բայց բարին ի գործ դնելը՝ ոչ. որովհետեւ չէ թէ բարին որ կ'ուզեմ, կ'ընեմ, այլ չարը զոր չեմ ուզեր, զայն կ'ընեմ... Ուստի ես կը գտնեմ օրէնք մը որ երբ բարին ընելը կը կամենամ, չարը իմ քովս է: Վասն զի ներսի մարդուն նայելով՝ Աստուծոյ օրէնքին կը հաւնիմ, բայց ուրիշ օրէնք մը կը տեսնեմ իմ անդամներուս մէջ, զինուած իմ մտքիս օրէնքին դէմ, որ զիս գերի կ'ընէ իմ անդամներուս մէջ եղող մեղքի օրէնքին» (Հռովմ. է. 15—23):

Ֆէլիքս տը Տանդէքի կարծիքով՝ որ հեղինակն է կենսաբանական նոր տեսութեան մը, մարդուն և կենդանիներուն բոլոր կենսական երեւոյթները որոշադրուած են (déterminé) միջավայրի պայմաններով: Այդ երեւոյթներէն ոմանք ընկերացած են գիտակցութեան épiphénomènes-ներու որոնք կամքի պատրանքը կուտան և սակայն բոլորովին անգործօն են: Ինչպէս որ մարդուն մէջ կարգ մը մեքենական-կենսական երեւոյթներ տեղի կ'ունենան որոշ déterminisme-ով մը, առանց իր գիտակցութեան, նոյնպէս գիտակցօրէն կատարուող կենսական և հոգեկան երեւոյթներն ալ եթէ առանց գիտակցութեան կատարուէին՝ դարձեալ ճիշդ այնպէս պիտի կատարուէին՝ ինչպէս կը կատարուին հիմա: Գիտակցութիւն կոչուածը լոկ լուռ վկայ մըն է՝ էութեան մէջ անցած դարձածներուն, զանոնք ուղղելու կամ վարելու մասին որ և է գեր կամ ազդեցութիւն չունի, և կամք կարծուածը պատրերեւոյթ մըն է միայն, որովհետեւ մենք չէ՛ թէ կը գործենք այն բաները զոր կը կամենանք, այլ կը կամենանք կամ կը կարծենք կամենալ այն բաները զոր կը գործենք, կամ ուրիշ խօսքով՝ ներքին կամ արտաքին այս ինչ որոշ պայմաններուն տակ մարդիկ այս ինչ կերպով միայն կը խորհին ու կը գործեն ու կամեցողութիւնն ալ միջավայրի ազդեցութիւններուն և կաղմութեան պա-


հանջներուն միայն կը հետեւի [1]: Ինչպէս կ'երեւայ՝ երկու ծայրայեղութիւններ, կրօնքն ու նիւթապաշտ իմաստասիրութիւնը քիչ չատ զիրար կը շօշափեն այս խնդիրին մէջ, թէեւ տարբեր բառերով. բայց մինչ կրօնքն կը վարդապետէ թէ մարդ՝ թէեւ մարդկայնօրէն անկարող իր մարմնի պահանջումներուն յաղթելու, կրնայ սակայն փոխուիլ երկնային ազդեցութեամբ մը՝ Ս. Հոգիին շնորհքովը և տիրանալով ինքնշխան կամքի մը՝ յաղթել իր բնազդումներուն և միջավայրի ազդեցութիւններուն, արդի նիւթապաշտ իմաստասիրութիւնը դժբախտաբար այդ տեսակ կարելիութիւն մըն ալ չընդունիր և մարդ էակը կ'ուզէ պահել միջաւայրի և արտաքին ու ներքին ֆիզիքական, բարոյական ու հոգեկան ազդակներուն պահանջներուն յաւիտեական գերիի իր ողորմելի դերին մէջ: Սակայն՝ բոլորովին ստոյգ է թէ կամք կոչուածը իսպառ չեղոք և անզօր հանգամանք մըն է մարդկային բնութեան մէջ, ստոյգ է որ բնազդական մղումներուն, արտաքին ազդեցութիւններուն յաղթող, տիրող բարձրագոյն սկզբունք մը չկայ մարդու մէջ...: Եթէ ստոյգ ըլլար ատ, մենք չպիտի գտնէինք մարդկութեան մէջ հոգեկան գերազանց կորովի տէր այն սքանչելի տիպարները՝ որոնք պարզապէս կամքի ուժով կրցած են կատարելապէս սանձել բնազդական էութեան պահանջները և յաջողած են իրենց անձը հպատակեցնել իրենց կամքին: Դերազանց բարոյականի մը շունչովը ոգեւորուած ալլասիրութեան բոլոր դործնական ցոյցերը, բոլոր յայտնի ու թաքուն անձնուրացութիւնները, բոլոր սրտառուչ առաքինութիւնները որոնց օրինակները ատեն ատեն կը տեսնենք կամ կը լսենք, տիրող ընդհանուր զգայապաշտութեան և խստութեան մէջ իբր մաքուր և քաջալիքի երեւոյթներ, կ'ապացուցանեն թէ մարդերու մէջ բնազդական էութենէն, ստորին Նսին վեր կայ բարձրագոյն կարողութիւն մը, ազնուագոյն Նս մը, որ ինչքան ալ շատերու մէջ խեղդուած, գրեթէ չքացած ըլլայ բնազդական Նսին ճակատագրական պահանջներուն տակ, կրնայ սակայն երեւան գալ վսեմ յայտնութիւնով մը և տիրողը դառնալ ստորին Նսին: Բնազդական-զգայական մարդը՝ որուն կը պատկանին դժբախտաբար մարդոց, նոյն իսկ դաստիարակեալ և զարգացեալներու ստուար մեծամասնութիւնը, զուրկ է ճշմարիտ կամքի վեհ ձիրքէն. անոր կարծեցեալ կամքը իրականին խաբուսիկ և պատիր երեւոյթն է լոկ, որ կը հետեւի արտաքին ազդեցութիւններու և ներքին ախորժակներու ծնցուցած պահանջներուն միայն. անիկա վարող ուժ մը չէ, այլ վարուող, կրաւորական հանդամանք մը յաւէտ:

Արդի դաստիարակութիւնը միտքի և քիչ մըն ալ զգացումներու դաստիարակութիւն մըն է լոկ. բայց միտքի մարդէն և զգացումի մարդէն վեր կայ ազնիւ նկարագրիով կազմուած բարի կամքի տէր մարդը, որուն շինութեանը պէտք է նուիրուի արդի դաստիարակութիւնը:

ՅՈՎ. Հ. ԳՍԶԱՆՃԵԱՆ

[1] F. le Dantec. Le Déterminisme biologique et la Personnalité consciente.

Ժ.-Ք. ՀԻՒՋՄԱՆՍ



Երկար և տաժանելի հիւանդութիւնէ մը ետքը՝ Հիւզմանս մեռաւ վերջապէս։ Ռումիկ գրագէտ մը չեղաւ՝ որպէս զի հանրութիւնէն ճանչցուէր։ Բոլոր միւս գրագէտները անոր մտածումներուն հանճարեղութիւնը, արտայայտութեան ճոխութիւնը և ինքնատուութիւնը, զգայութիւններ վերլուծելու մէջ քիչ մը չափազանց չփոթ ճշգրտութիւնը կը գնահատէին։ Իր կեանքին զանազան դրուագներուն մէջ, գրեթէ զգացում մը միայն տեւական մնաց, — շատ անկեղծ ճաշակ մը արուեստին հանդէպ։ Ամէն մարդ կը յիշէ իր այնքան նշանակալից խօսքը ժամանակի գրական բարքերուն առիթով յայտնուած. «Յաւալի է որ՝ Զօյա ստակ վաստկեցաւ. ատիկա օրինակ մը եղաւ քաջալերելու նպարտածառի աշակերտները, որ իրենք ալ գրականութիւն ընեն»։ Իր գիրքերը, իրենց տարօրինակութիւններով և կոշտութիւններով, հեզութիւնով համակուած, կը բացատրեն ամէնէն առաջ զառն հեշտութիւնը արուեստագէտի մը՝ որ կ'արտայայտէ ինչ որ կը զգայ։ Հիւզմանսի ամբողջ երեւակայութիւնը քմայքով համակուած է. քիչ մը ատեն դեղագիտութեան մէջ փնտռած է իր մեղմագծոտութիւններուն դարմանը։ Անշուշտ կը յիշուի A Reboursը, և իր արուեստագիտական նրբութիւններովը, արտառոց ճաշակներովը, հիւանդագին քմայքներովը ծանօթ Des Esseintesը, որոնք բնապաշտութիւնէն իր վերջնականապէս խզումը կը թուագրեն։ Օրուան նորութիւնը կը կաղմէր ան։ Մնօպները անոր երեւակայութիւնները և հնարամտութիւնները խրացուցին ու Զանացին անոր նմանիլ։ Կարելի է որ թանձրամիտ և կանոնապաշտ ուղեղները տանջեց, որոնք դատապարտուած էին բանի մը չնայելով տարօրինակութիւններու մէջ իյնալ։ Դէպ ի ծայրայեղ սկեպտիկութիւն ձեռնարկ մը ընելէ ետքը, վերջապէս կրօնական հաւատքին մէջ գտած է իր ապաստանարանը, հանգստութիւնը, զորս այնքան երկար ատենէ ի վեր փնտռած էր։ Սէվրը փողոցի իր բնակարանը թողելէ ետքը՝ ուր իբր խղճամիտ պաշտօնատար երեսուն տարիներէ ի վեր բնակած էր, Հիւզմանս գնաց երկու տարի Լիւկիւժէի մէջ ապրիլ, վանքին մօտիկ, պզտիկ տունի մը մէջ՝ ուր կէս-գրական, կէս-կրօնական կեանք մը կը վարէր և ուր սկսաւ Oblatն գրել։ Վանքը շատ կը սիրէր, իբր արուեստագէտ երկար ատեն հոն ապրելու համար։ Բայց ամէն տեղ հրաշալի բարութեան մը, գերակշիռ միտքի մը և սիրտի մը յիշատակը կը ձգէր։ Իր լեզուական տարօրինակութիւնները կը զուարճացնէին միայն, չէին վիրաւորէր, որովհետեւ նկարչագեղ և երկրներանգ նիւթերը, յաճախ կոշտ և մերթ բարեպաշտիկ վերակոչումներու խառնուած, կը կազմէին այն խառնուրդը՝ որ դժնէ ու սիրելի մարդերը կը խորհրդանշէ իր մէջ։

Թարգ. Ն. Ս.

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՇՆՈՐՀԻՆՈՎ, ՄԱՐԳԻԿԻ. — ԶԱՊԷԼ
ԵՍԱՅԵԱՆԻ

Այն հմայիչ նկարագրողը և խորամանկանց զիտողը՝ որ է Տիկին Զապել Եսայեան, մեզի կուտայ իր անդամների Գիրքը, **Շնորհիով Մարգիկի** Տիկին Եսայեան տալանդաւոր վիպող մըն է և նրբատես հոգեբան մը, մեծապէս ընդունակ ծարգմանելու մարդկային բոլոր խոր կիրքերը և յուզումները՝ իրենց հարազատ ու ծաքուն գոյնէրովը։ Մեր գրականութեան մէջ իր գործունէութեան կարճատեւ շրջանին՝ բեղուն արտադրութիւններու շարք մը ունեցաւ, արժանաւորապէս սեփականելով կարող գրագիտունիի մը համբաւը։ Տիկին Եսայեանի գրականութիւնը մնայուն դրօշմ մը ունի, և գրականութեան զանազան սեռերուն մէջ՝ ազգեցիկ պատուաստ մըն է։ Իր վիպողի մեծ կարողութիւնը շեշտեց մանաւանդ իր **Վէպը**ով և **Սպանական Մահին** Մէջով, նուրբ և սիրուն գործեր։ Իր **Շնորհիով Մարգիկին** մէջ՝ Տիկին Եսայեան կը դնէ նոյն խոր զգայութիւնը, նոյն վերլուծող ոգին, նոյն զիտող միտքը, որոնք տիրական յատկանքներն են իր գրելին։ Իսկապէս, վէպ մը չէ՝ սակայն իր այս գործը, այն ըմբռնումով՝ որուն իրականացումին կը ձգտի վէպ մը, «Շնորհիով Մարգիկ» անունը՝ շքեղ պիտակ մըն է, զրոշմուած գիրքին նակատին, ուր գրական շատ արժէքաւոր էջեր՝ ի զուր փնտռել կուտան հետքը «Շնորհիով Մարգիկին» Աւելի պատկերներու շարք մըն է՝ ամբողջութիւնը այս գործին, բան որոշ ծրագրի մը վրայ ընդլայնուած վէպ մը, իր նպատակաւոր հանգոյցներով ու եզրակացութիւնով։ Պէտք է շեշտել որ վէպը զուրկ է հիմնովին որոշ նիւթ մը, որուն ձգտիւ իրենց առնչութեանը մէջ անկապակից տիպարներ են՝ որ տուրանց մը կ'ընեն գործին մէջէն, առանց իրենց դերերովը, նկարագրովը իրարու զօգուելու և նիւթ ամբողջացնելու։ Յակոբ, Զարուհի, Աննիկ, և յարակից քիչ կամ շատ կարեւոր դէմքեր՝ անշատ տիպարներ են՝ որոնք վիպական աղուցուածքի մը օղակը

չեն կազմեր որոշապէս, և որոնք ո'չ մէկ կերպով կը ծառայեն վերլուծումին՝ շնորհով մարդերու բարբին։ Այն աճապարանքը, որուն մէջ արտադրուած ըլլալ կ'երեւայ յայտնապէս վէպը, շատ բան տուժել տուած է գործին արուեստական արժէքին, որ ենթարկուելով խղճաւոր խնամքի և գրագիտական ու վիպասանական պահանջներու հոգին, — արժանիքներ՝ որոնցմէ ո'չ մէկ կերպով զուրկ է Տիկին Եսայեան, — մեծապէս պիտի շանցնէր գործին. և կը հաւատամ թէ, տաղանդաւոր հեղինակուհին՝ իր վարպետի դատողութեամբ՝ չպիտի վարանէր հաստատելու իր գործին մէջ՝ այս թերին՝ որ, անկախաբար արուեստի նկատումներէն, արդարանալու իրաւունք մը գտնէ թերեւս, հապճեպ ու աճապարանքով արտադրելու պահանջին այն անողոր պատուհասէն՝ որ մեր գրողներէն շատերուն համար ճշմարիտ չարիք մը եղած է, անոնց տաղանդը խաթարող և գործը պղծող, Վիպական այդ զգալի թերիէն զուր, **Շնորհիով Մարգիկը**, նկատուած իր անշատ պատկերներու արժէքին մէջ, գրական բարձր արժէքով գործ մըն է, մեծապէս հզօր ու տպաւորիչ։ Անոնց մէջ՝ հեղինակուհին տաղանդը, երեսակայութիւնը և արտայայտելու և վիպելու կարողութիւնը կը հասնին բարձր աստիճանի մը։ Աննիկը, իր ջլազար աղչակն յուզումներուն ու դիւանարութիւններուն մէջ, Յակոբը, Զարուհին, հրդեհը, Աննիկի յիմարութեան տեսարանները՝ պատկերացուած են նկարագրութեան ուժգնութեամբ մը, զգայութիւններու խոր հոգեբանութեամբ մը և իրապաշտ ճշգրտատպութեամբ մը՝ որ գերազանցապէս յուզիչ կը դարձնեն անոնց ընթերցումը և կը գրաւեն միտքը հեշտաւէտ յափշտակութիւնով մը։ Տիկին Եսայեան այդ տեսարաններուն մէջ կը գերազանցէ ինքզինքը, իր խորապէս յանկուցիչ էջերով, ուր բազուկին տէր վարպետի մը վրձինը կը խաղայ, կառավարուած ուժգին ու տպաւորիչ տաղանդէ մը։ Արդէն Տիկին Եսայեան գերազանցապէս ունի վիպողի տաղանդը, և իր արուեստը, մինչեւ իր ամենամուրբ մանրամասնութիւնները՝ խոռովիչ շեշտ մը ունի, որով տիրապէս կը կենդանացնէ իր էջերը և շունչ ու ոսկոր, հոգի ու մարմին կուտայ իր տիպարներուն, և բնա-

կանուծիւն, ճշգրտատպուծիւն՝ իր տեսարաններուն: **Շնորհիմով Մարդիկին** մէջ տիրող վիպական մասնանշուած թերին, կը փոխարինուի և կը մոռցուի այն հողակապ էջերով՝ որոնցմով մարմին առած է գործը իր ամբողջութեանը մէջ և որոնցմով կը զեպու մէկ ծայրէն միւսը: Անոնց ազդեցութիւնովն է նաև որ կը մոռցուին ոճի անփութութիւններ, լեզուական պզտիկ սխալներ, բացատրութեան կրկնութիւններ՝ որոնցմէ զերծ չէ բիշ մը **Տիկին Եսայեանի** գրականութիւնը ամէն տեղ: **Շնորհիմով Մարդիկին** մէջ բոլոր դէմքերը, բայց ամէնքն ալ, «Երկայն կտրուած Եղնիկի աչքեր» ունին: Ո՞ր Եղնիկի զերդաստանն է աղ, ուր մէկը տարբեր աչք չունի: Նոյնպէս ոճի թեմէ անխնամութիւն մը՝ տիրական տկարութիւններէն մէկն է **Վ. Կալլին** հեղինակութիւն, որ աւելի հոգը ունենալով արուեստական այդ խղճմտութեան, շատ բան պիտի շահեցնէր իր գործին, ընդհանուր առումով: Վստահ եմ թէ, գրական անկեղծութեան ու անաչառութեան անունով յայտնուած այս դիտողութիւնները՝ չեն կրնար երբեք վիրաւորել մեր տաղանդաւոր աշխատակցութիւն, որուն ուրախ կը զգանք տաղանդին հիմնալու առիթ մը գտած ըլլալնու: **Շնորհիմով Մարդիկով**, Սարգսեան խնամուած տպագրութիւնով գողտրիկ հատոր մը, Նշան-Պապիկեան Դրատունէն:

Ե. Ա.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

«ՏՕՄԻՆՕՒՆ»

Մասիսի 19րդ թիւին մէջ երեւոյց. Ձեր յօդուածը՝ խորհրդապաշտ կարգ մը բանաստեղծներու մասին՝ իմ և Արտաշէս Յարութիւնեանի կարծիքներուն վրայ, կը պարտաւորէ զիս մէկ երկու խօսք ընել և պզտիկ բացատրութիւն մը տալ հրապարակաւ:

Կ'երեւայ թէ իմ մտածելու եղանակս լաւ չեմ կրցած արտայայտել, քանի որ կը կարծէք թէ ես նոյն խանդավառութիւնը չունիմ խորհրդապաշտ Դպրոցին համար: Կրնայ ըլլալ որ իմ և Արտաշէս Յարութիւնեանի խանդավառութեան տեսակը տարբեր ըլլայ, մանաւանդ այս ինչ կամ այն ինչ անունին համար,

բայց ես չեմ կարծեր թէ հիմնական տարբերութիւններ ըլլան մեր մտածելու եղանակին մէջ, Այս մասին մասնաւոր արժանապատուութիւն մը կը զնեմ պնդելու, որովհետեւ դիտած և համոզուած եմ որ Արտաշէս Յարութիւնեան զարմանալի սրտեւսութիւն մը և թափանցողութեան ճշգրտութիւն մը ունի ժամանակակից ֆրանսական բանաստեղծութեան վրայ:

Ըսելով թէ **Աւնալոյի** ամէնէն փայլուն շրջանը բմբոստացում մըն էր իրերու ներկայ վիճակին դէմ, չուզեցի բնաւ գրական այդ մեծ շարժումը տնտեսական հարցի մը անձուկ սահմաններուն մէջ սեղմել միայն, այլ ըսել ուզեցի թէ մտաւորականներու չքաւորութիւնը և անոնցմէ ունեց խիզախ անձնավտահութիւնը մեծ օժանդակ մը եղաւ գրական այդ շարժումին և թէ անոնք ալ իրենց յեղաշրջութիւնը կատարելէ ետքը դադրեցան նոյն պայքարող, դիմագրաւող և կեանքոտ դերը ունենալէ: Իմ յօդուածիս նպատակը **Աւնալոյի** գործերը ըլլալով, իրենց բազմակողմանի շարժումէն յիշատակած էի միայն այն երեւոյթը՝ որ առնչութիւն ունէր ըսելիքներու հետ:

Մասիսի 23րդ թիւին մէջ կը գտնեմ նաև սա տողերը. «Որ և է նախասիրուած հեղինակի մը վրայ եղած ուռումնասիրութիւնը մասնակի ըլլալու չէ. նոյն բանը կարելի է ըսել **սէմալոյի** վրայ, որ արդէն **Mercur**ի մէջ փառաբանուած է, ուրիշ հանդէսներու մէջ սաստկապէս քննադատուելու համար»:

Ձեր այս տողերէն կարելի է եզրակացնել թէ **սէմալոյի** մը տպագրական ձեռնարկութեան մը արդիւնքն էր միայն: Իրականութեան մէջ սակայն, խորհրդապաշտ Դպրոցը ինքնածին, ինքնայոյզ բուռն գրական շարժում մը եղած է, որմէ զոգրուած է մեծապէս պաշտօնական գրականութիւնը, որուն կենսակիր, վերանորոգող շունչին տակ շատ մը նուիրագործուած համբաւներ թառամած են և մանաւանդ թէ ան մեծ, հիմ. նական ազդեցութիւն ունեցած է ամբողջ քաղաքակրթ աշխարհներու գլխաւորութեան վրայ, միեւնոյն ատեն ազգած ըլլալով ամէն կարգի արուեստներու և նոյն իսկ ժամանակակից իմաստասիրական և ընկերական ըմ-

բռնումներուն վրայ, իմ տեսութեամբս՝ Մէն-տէսի գիրքը անբաւական և միակողմանի է. արդէն Մէնտէս քանի՞ անգամներ հակա-սական կարծիքներ յայտնած է խորհրդա-պաշտութեան վրայ, Գալով Խորհրդապաշտ Դպրոցին զուտ բանաստեղծական և զեղեցկա-գիտական սահմանումին, Մալարմէի սահմա-նումը ամէնէն ճիշդը և կատարեալը կարելի է համարել, Ուրիշ խնդիր է թէ այսօր Խոր-հրդապաշտ Դպրոցը իր կենսականութիւնը կորսնցուցած է, եւ իրաւ, ինչ որ ալ ըսուի, **սէմպօլիսմը** զրական պատմութեան կը պատկանի ալ, անիկա, թէ եւ դեռ շատ մօտա-կայ, անցեալն է, Այն մէկ քանի մեծ համբաւ-ները որոնք տեսած են, ստանձնացած են տարբեր ուղիներու մէջ և իրարմէ հեռացած եւ իրենց համար իսկ առաջին տարիներու հաւաքական զրական ջանքը, յիշատակ մըն է միայն, Բայց եթէ Խորհրդապաշտութիւնը կարելի է անցեալը նկատել, ըսել չէ թէ Խոր-հրդապաշտ վարպետները իրենց կարեւորու-թիւնը կորսնցուցած են, հակազդեցութեան զիւրի միջոցներուն ապաւինող վաղանցուկ համբաւներ անկարող էին զիրենք նսեմացնե-լու Ֆրանսական բանաստեղծութիւնը ալնեւ, բեւ փոխանցման շրջանի մը մէջ կը գտնուի, տեսակ մը դադար, ոչ որի համար գաղտնիք մը չէ սակայն որ՝ վաղուան բանաստեղծու-թիւնը ուղղակի արդիւնքը պիտի ըլլայ Խորհրդապաշտ Դպրոցի յեղաշրջման:

Գալով Վէրհարենի, միշտ անպայման հիացում մը ունեցած եմ իրեն համար և ապա-հովաբար իրեն տրուած ոսկի շրջանակը շատ չէ բնաւ Առանց մասնաւոր բան մը գրած ըլլալու, կը կարծեմ թէ ամէն անգամ որ առի-թը ներկայացած է, իմ խորունկ հիացումս յայտնած եմ պեղծիւրացի մեծ բանաստեղծին նկատմամբ, Ըսի թէ՝ այս ինչ կամ այն ինչ անունին համար կրնայ ըլլալ որ Արտաշէս Յարութիւնեանի համակրանքը չունենամ, Այսպէս, ինծի համար Մօռէասի ուշ մնացած Յոյնի սնապարծութիւնները անհանդուրժելի են, ինչ որ ալ կարողամ իրմէ, ականջիս մէջ միշտ պիտի լսեմ ապահովաբար իր անհարկի ինքնագովութիւնները, Ասիկա ըսել չէ բնա-կանաբար որ Մօռէաս արժանի չէ ճանչցուե-լու: Իր վրայ կարծիքները շատ հակասական եղած են, բայց ոչ որ ուրացած է իր ճշմա-րիտ բանաստեղծի մեծ յատկութիւնները:

Իսկ symbolisme բառին արտասանու-թեան համար, ահաւասիկ, Երբեք յաւակնու-թիւնը չեմ ունեցած լեզուական նրբութիւն-ներու մէջ վճռական բան մը ըսած ըլլալու և հիմա կ'անդադառնամ թէ ինչքան իրա-ւունք ունէի, որովհետեւ արդարութիւնը պարտք կը դնէ իմ վրաս խոստովանելու թէ՛ սխալած եմ symbolismeը զ ով զրեւով: Ձեր յօդուածին մէջ կ'ըսէք թէ Ֆրանսացիներ-րու հարցուցած էք և հաստատած են ձեր կարծիքը, եւ ալ նոյն մօտեմը ունեցայ և հարցուցի **սէմպօլիսմ**ներու և անոնցմէ մասնաւորապէս վարպետի մը՝ որուն հմուտ-թիւնը և ձեռնհասութիւնը լեզուական խնդի-րներու և մանսաւնդ արտասանութեան նրբու-թիւններու մասին որ և է կասկած չվերցնելու: Արդ, դասականօրէն symbolismeը պէտք է արտասանել **ս ով**. ա'ս է ճիշդը, Բայց, միխմարական կէտ մը կայ ինծի համար, ան ալ ահաւասիկ, **զ ով** ճնշումն ալ շատ ընդհանրացած է և կարելի չէ բոլորովին մեծ սխալ մը նկատել:

Կը յուսամ թէ այս մէկ քանի անկեղծ տողերս կը կարդաք այն ներողամտութեամբ, զոր ինձմէ կը սպաւէիք և որուն սակայն ես իմ կարգիս պէտք չունեցայ բնաւ:

ԶԱՊԷԼ ԷՍԱՅԵԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳ.

2. — [Սյնդալ] . — Նամակնիդ՝ բոլոր ստացուածներուն մէջ, ամէնէն ինքնատիպ ու եզականներէն մէկն է Կարդանքը:

Դպրոցականի սա տարակալ շրջաններուն լուսնոս երեւակայութեան ներոյժ բան-դագուռանքներու քերտս դրոմը կրող ներփակ պատկերաւորներ, անկա-պատէ ներաւխարհի սր սրագեղունե-րուն, ինչպէս տեղոս պատանիի ան. հասականութեան մը տարաւեւժ գգայ-նութիւններով ու հոգեկան ներքին փո-ղումներով արտայայտման բնականու-րեան նկատմամբ, չեմ գիտեր թէ ի՞նչ համեմատութիւնով պիտի յաջողիմ նը-սպասաւոր գաղափար մը երաւսա-ւորել:

Ս'հ, կա'նգ առէք, ըն'նչ մը Դուք կը

զգա՞ք թէ ի՞նչ կ'ըսէք, միաթիք պարոն, ի՞նչ է աս. ի՞նչ ո՞ճ է. ի՞նչ լարիւրինձոս է. **Ներաւխարիլ** ի՞նչ շուտ ալ իր գրական նախնիրը գործեր է... մինչեւ Այնգապ Շիւրկէշիտակ չըսէ՞ք ինչ որ կ'ուզէք հասկցնել:

Կը կարդանք նաև ձեր ներսիակ բանաստեղծութիւնը: Նոյն մոռութիւնը, նոյն մշուշը, նոյն բռնագրօսիկ ճիւղը անհասկնալիութեան, նոյն ճողովութիւնը բառերու և զաղափարներու, ծանրաբեռնուած անպէտ կուտակումներով իրար հալածող և իրար հակասող զգայութիւններու, թանձրացած՝ անթափանց հոծութեամբը տարտամ ու անկապակից աղօտ խօսքերու և և սակայն դուք ոչինչ մը չէ՞ք. — որով՞ ճետեւ ձեր տողերուն մէջ կը զգացուի անկերպարան տաղանդի մը նշոյլը. — և ատելի միջակութիւն մը չի ծածկուիր ձեր մէջը: Դուք ունիք խմորը գրողի, անպատրաստ, անկազմակերպ այն խմորը՝ որ կը կարօտի ճարտար բրուտի մը ձեռքին, ստանալու համար վճական ցանկալի կադապարութեւ, արուեստին երազուած նրբութիւններովը զեղեցկացած, Հիմա, մոլորած մըն էք դեռ, բմահաճ հովիւն յանձնուած փետուր մը. որ կը տառանի յեղակարծ յորձանքներէ: Պէտք էք գտնել ձեր գրական ուղին, հոն ընթանալու համար հաստատ քայլերով. ղէպի գրական բաղձալի հանգրուանը: Մթին, ճապող, խորախորհուրդ արուեստով բռնագրօսիկ այդ գրականութեան անձնատուութիւնը չէ որ կրնայ ձեզ առաջնորդել զրոյ ըլլալու ձեր երազին: Յստակ, վճիտ, հասկնալի գրականութեան դարձն է որ՝ պիտի կրնայ փրկել ձեզ մոլորանքէն, ղինելու համար ճշմարիտ գրականութեան ուղիին մէջ, ինքնատպուութիւն չէ՝ ճապողութիւնը: Ո՛չ ալ բռնագրօսիկ ճգունքներով երկնուած խորթացած այդ արուեստը, — որուն միբրոպները ցանեցին ներաշխարհներով արտաշխարհներով և որմէ վարակուած մըն էք, — գրականութիւն է երբեք: Դարձէ՛ք ճշմարիտ գրականութեան:

Տիկին Զապէշ Եսայեանի «Դոր Մենարան մը» յօդուածին Ա. եջ Արդ տողին մէջ, «Բարոգութիւնները սպասող» կարդալ «կարողութիւնները սպասող»:

ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԱՍԻՍ»-Ի ՀԱՐՅՈՒՄԻՆ

Ճիշդ է որ Եւս դժուար է, համոզուած, իրական սիրոյ մը կապը հօր մը անխորհուրդ արգելիովը խզելը, մանաւանդ հարուստ, գեղանի ու կեանք, սերը հոգեկանօրէն ըմբռնող ու ապագայ անխորհուրդեան կամ բռնաւարեան հետեւանքները հասկնող երիտասարդի մը համար. կարելի է որ ալ արգելի պատճառ մըն ալ ըլլայ՝ անձնատպանութեան, քերես գիտնալով մէկտեղ թէ կրօնական ու ընկերային նկատմաները անարդարանալի պիտի թողուն զինքը: Անձնատպանք որչափ ալ անմեղ եղած ըլլայ իր սիրոյն մէջ, իր իրաւունքի կը կորսնցնէ: Պէտք չէ մոռնալ որ՝ հայր մը ինչ որ ալ ըլլայ՝ աստիճան մը իրաւունք ունի՝ պատուար մը ըլլալու տղուն փառքին մէկ ընթացքին: Ուրեմն, այս պարագային՝ տղուն կը մնայ կրկին անգլաններ աշխատիլ համոզել հայրը, իր պատճառաբանութիւնները մանրամասնել. եւ եթէ հայրը իր այդ ինքնուրոյն կողմէն փառքին իրաւունքի ըլլալը գիտնալով մէկտեղ յամառի, այն ասեմ ան իր իրաւունքի սահմանը կորսնցուցած ըլլալով, տղան կը մնայ բաժնու իլ ծնողական երջանակէն. Այս բաժնումն ալ թէ ան սիրտը է, սակայն ներքին ի՞նչ համոզումն ու ընթացքն վրասն. զարգացած երիտասարդին համար: Բայց երբ խնդիրը անձնատպանութեան կապով՝ այն ասեմ ո՛չ երջանկութիւնը, ո՛չ ալ ամուսնական համոզումները կ'ապամոլորին կեանքի մը հետ: Եւ ի՞նչ կ'արժեն այն ասեմ «ընկերային, ժիզիքական ու բարոյական» բոլոր առաւելութիւնները:

ՇԱՊՈՒՀ

Ստացանք Օ. Արզուման Հրատարակութեան Գ. Հատորը՝ Խնչ Պէտք է Կիւնայ Դեռաթի Մանչ մը, Թարգմանութեամբ ծանօթ գրագէտ Միքայէլ Շամտանեանի Դեղարուեստական գողտրիկ տեսքով և Սազանեան խնամուած տպագրութեամբ այս հատորը, որ Բ. Գիրքը կը կազմէ Ամէն Տարիքի Առաջնորդը՝ շարքին. կ'ուղղուի պատանիներու մէջ ճարտար մոլութիւններու դէմ թուր մը կանգնելու բարեբար դերին և արժանի է պատանի սերունդին ընթերցանութեանը Հրատարակիչը՝ Տիար Օ. Արզուման՝ օգտուէտ ձեռնարկ մը ստանձնած է իր հրատարակութիւններու այս շարքով, որոնք նախընթացներուն կարեւոր մէկ ընկերը կը կազմէ այս նոր գիրքը:

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ: Արտոնագր. ՏՕԻԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍՍԳԱՆԱՆ

ՊԱԼՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊՈԶՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ ձրանք 9,500,000
Վերապահովագրական

դրամագլուխ և պահեստ » 142,740,00


ՊԱԼՔԱՆ Բնկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրաւանդելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
այաքիա, Տէօյչէ Սրիէնդ Պանքի կից, Սինաուռն խան. (2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իւթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրավաճառներու քով. Կեդրոնատեղի Աշտնան գրատուն:

Ընտանեկան Գաղանիքներ 3 հատոր	15 ղրշ.
Արուարձանին Տղան 3 հատոր	15 ղրշ.
Հանրակառքին Ոճիրը	5 ղրշ.
Ամուսնութիւնք Բարիշու	5 ղրշ.
Քաղաքական Տնտեսութիւն. Ժօզէֆ Կառնիէ	5 ղրշ.

Եղիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Պարսկերէն Բառարանը, որ գեղեցիկ աշխատութիւն մը և ամէն անհատի անհրաժեշտ Բառագիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրավաճառ Ջարեհ էֆ. Թորոսեանի քով, (Պոլիս, Պահլէ Գարու, Բասըմ Բաշա Խան) որուն կրնան գիմել Բառարանին՝ (գինը 15 ղրշ. փոսթի ծախքով 16¹/₂) ինչպէս գրեհական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խղճամիտ գրավաճառի մը հետ գործունէնալու վստահութեամբ. — Իր հրատարակութիւնն է նաեւ Դպրոցի Գիրքը Դասագիրքերու շարքը, որ միակն է կանոնաւոր մէթոտով մը ընթացող՝ նախակրթական դասընթացքի շրջանին համաձայն:




Կը գտնուի բոլոր
գեղագործներուն քով:
Թուրքիոյ ներկայա-
ցուցիչ Ո. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիր-
ԲԵՐՍ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12 տարար և երկար տարիներէ ի վեր
կը դարմանէ ստամոքսի, աղիք-
ներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւն-
ները, հին և նոր դաղիական օտարերը: Այս վերջին օտարերը՝ առանց
ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ մի-
ջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշարթի
օրերը միայն ձրի:

(8—10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց
կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն
է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետև
լաւ մեքենայ մը անթիւ և անհամար
ծառայութիւններ կը մատուցանէ, մինչ-
դեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր
մըն է:

Ի ոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Զեռփի, ոսփի ու ոսփի եւ ձեռփի
միանգամայն մեկեաններ
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան
ամէնէն աւելի կատարելագործուածը,
հաստատունը և դիւրագործածելին ըլ-
լալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն
ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան
վաճառատուններուն մէջ՝

ԿՊՇԱԸԹԱ ԱՆ
ՄԱՍՆԱՎ ՀԱՐՈՒՄՆԵՐ

ԿԱՆԱԹԱ

ԲԵՐԱ

ՊՈԼԻՍ

ՍԿԻՏԱՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, 343 և 343.
 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ,
 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
 1. Սուլթան Համամ.
 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.
- Զարչը Պօյու, Թ. 120.
- Գասերը եւ նորոգութիւնները ձրի.

կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնագիտէր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

(9—10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւառներու համար տարեկան

60 դր.

Արտասահմանի

» »

14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ,
միշտ ձրիաբար , Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Զննատարկուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է դրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

«ՄԱՍԻՍ»-ի Հասցէին

Գուրեւնլու խան, քիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

درعابه غلطه قورشونلى خاندزه نمره ۷ «ماسيس» غرضهسى اداره خاندسى

Rédaction de la Revue "MASSIS",

Nº. 7, Courchounlou Han, Galata.

CONSTANTINOPLE

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է ԿԻՆՐ ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ ՄԱՍՈՒԼԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատմութեան ամփոփոյնով մը կը ներկայանայ Ենովք Արմէն: Այս գիրքով չէ՛ որ պիտի հաստատէր սա նշանաւոր քիւնքի իր գրադասի, հետախույզի կարողութիւններուն կը միացնէ վիպողի տաղանդը:

Կինը բացի իր գրական արժէքէն, խաղաղական տեսակէտով ալ ուշագրաւ նորութիւններ կը պարունակէ: Ճաշակատու ու սիրուն հասարակ մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարգաւոր:

Ենովք Արմէն (Կինը մէջ) կ'զգուշանայ այն միտ գրականութենէն, կ'զգուշանայ անարեւ մեծ սենեակներու վարագոյրներուն ետին դալկացող կեանքէն. իր ուզածը դուրսի կեանքն է, կեանքը, գլխաւորով, արեւին տակինը, իր յորդ ալիքաւորութեան մէջ: Ու նաեւ, իր մօտ փառաբանող մը կայ մարդկային սկզբնական վաղնջական բնագոյններէն, զոր երկինք կը հանէ, գլխաւորով մը: Ենովք Արմէն յստա՛ւորէն sensualiste, զգայական կամ զգայապաշտ է, առանց որ եւ է անպարկեշտութեան:

Անուշտ ամէն գրասէր պիտի փափաքի ունենայ Ենովք Արմէնի այս հրաշարակութիւնը, Կինը, գրական գեղեցիկ վայելք մը ըմբռնելու համար:

Կինը, հեղինակին գրչի այդ առաջնեկ զաւակը, նորութիւն մըն է իբր յոյսով:

Կինը իր գրական արժանիքին կը միացնէ խաղաղութիւն մը հիմնապէս առքիսիք՝ ու բոլորովին նոր նաշակով, որ կը յասկանցէ Կինըին համակրելի հեղինակը:

Երեսօտարդ հեղինակը, որուն գրութեանքը աշխարհ հանդիմով կը կարգացունի օրա-թերթերու եւ պարբերական հանդէսներու մէջ, այս անգամ իր մտածումները խաղաղացած է սիրուն ու կոկիկ հասարակ մը մէջ, որուն խաղաղութիւնը, բոլորին ազնուութիւնը եւ գեղեցիկ նաշակը հանդիմ կը պարգեւէ ըմբռնողին ունենալու անկէ հաս մը: Զերմապէս յանձնարարելի է այս գոյգրիկ հասարակ:

Իր ընդհանուր հանգամանքով Կինը կարգացունելու արժանի գիրք մըն է խաղաղութեան արժանաւորութիւններէն հեղինակին:

Գին 5 դրուշ: Կը գտնուի ամէն գրաւաճառի քով: